# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Թեղենիք համայնք, Կոտայքի մարզ, գ. Թեղենիք, 3փողոց,1շենք,
Հեռ. (060) 466492 , teghenik.kotayk@mail.ru

N 48
*13 մարտ 2020թ.*

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ՝ ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի ղեկավարի ընդունած որոշումները:

Առդիր 9 թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2020թվականի N 09

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին" օրենքի 16-րդ հոդվածի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020թվականի փետրվարի 26-ի թիվ 64-Ա որոշումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Հաստատել Թեղենիք համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների,սելավների,քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N1 հավելվածի

2.Մինչև 2020թվականի մարտի 20-ը ներառյալ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել

1)համապատասխան միջոցառումների պլան,

2)տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N2 հավելվածի

3)առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N3 հավելվածի

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

20 __ թ. ____________
գ.Թեղենիք

Հավելված N1

Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի ղեկավարի

2020թվականի մարտի 10-ի N09որոշման

ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐԵՂԵՂՆԵՐԻ ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՍԵԼԱՎՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| | | | |
| 1. | Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների քարաթափման տեղամասերի վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն | Համայնքի ղեկավար | Մինչև 2020թվականի Մարի 30-ը |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների և քարաթափման տեղա մաս երի անհրաժեշտ հատվածները մաքրելու | Համայնքի ղեկավար | Մինչև 2020թվականի Մարի 30-ը |
| 3. | Մաքրել համայնքի տարածքում հոսող գետի հունը | Համայնքի ղեկավար | մշտական |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատ րական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ գոտինե րում աշխատանքներ կատարելու համար | Համայնքի Ղեկավար | մշտական |
| | **2.Հիմնական միջոցներ** | | |
| 5. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտն վող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության,ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին | Համայնքի Ղեկավար | մշտական |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Անհրաժեշտության դեպքում կազմակերել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը | Տարահանման հանձնաժողովի նախագահ | Անհրաժեշտության դեպքում |
| 7. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին ջրհեղեղների,հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |

Հավելված N2

Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի ղեկավարի

2020թվականի մարտի 10-ի N09որոշման

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեղենիք համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման

| h/h | Կառույցի տեղադրությունը /բնակավայր,գետավազան,վտակ/ | Կառույցի տիպը/ հեղեղատար,հեղեղակարգավորիչ,բառած/ | Երկարությունը /մ/ | Լայնությունը /մ/ | Խորությունը /մ/ | Կողեզրերի թեքությունը/մ/ | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը/ բալ/ | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը,որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը/բավարար,անբավարար/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գետավազան | Հեղեղատար | 40 | 4,0 | 1,0 | | | Հասար. սննդի և օճանդակ շինություն | բավարար |
| 2. | Գետավազան | Հեղեղատար | 12 | 5,0 | 1,0 | | | Գերեզմանաքարի արտ և օճանդակ շինություն | բավարար |
| 3. | Գետավազան | Հեղեղատար | 120 | 15,0 | 0,5 | | | Ցանքատարածություններ | |
| 4. | գետավազան | հեղեղատար | | | | | | Անհատական բնակարաններ | բավարար |

Համայնքի ղեկավար Մ.Բաղդասարյան

Հավելված N3

Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի ղեկավարի

2020թվականի մարտի 10-ի N09որոշման

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/Հ | Վտանգի/աղետի/ անվանումը | Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը | Առաջարկման հնարավոր պայմանները | Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար | Համայնքի բյուջեում կամ այլ ծրագրերով 2020թվականին պլանավորված,հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիք միջոցառում ների համար ծախսերի չափն ու տեսակների |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | սելավ | 1-ին,4-րդ,6-րդ փողոցների տարածք | Հորդառատ անձրև, ձնհալ | Հասարակական սննդի օբյեկտ, իր շինություններով | Սելավատարների կառուցում | Համայնքի 2020թվականի բյուջեով քաղ պաշտպանության և փրկարար ծառայության բնագավառներում 60000դրամ: |
| 2 | հեղեղում | Հրազդան գետի ափամերձ տարածք | Հորդառատ անձրև, ձնհալ | անասնագոմեր | Գետի հունի մաքրում | |
| 3 | քարաթափում | Ցանքատարա ծություններ | Հորդառատ անձրև,ձնհալ | ցանքեր | Պատնեշի կառուցում | |

| | | |
|---|---|---|
| Թեղենիք համայնքի ղեկավար | | ՄԲաղդասարյան |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 08

### ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին" օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի պահանջով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հաստատել Թեղենիք համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1)Հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավար՝ Մարատ Բաղդասարյան

2)Անդամներ՝ ավագանու անդամ՝ Զոհրակ Մարգարյան

3) ավագանու **անդամ՝ Արսեն Գրիգորյան**

**4) ավագանու անդամ՝ Միհրան Սուքիասյան**

**5) մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արևշատ Առաքելյան**

**6) մարզպետարանի ներկայացուցիչ՝ Տիգրան Գեղամյան**

**7) մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արմեն Հակոբյան**

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 36 որոշումը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

20 __ թ. ____________

գ.Թեղենիք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 07

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 46հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. 4239 հոդվածից՝ Թեղենիք համայնքում ,,Բարեկենդան'' ազգային տոնը բարձր մակարդակով անցկացնելու կապակցության հատկացնել ,,Կէան'' մշակութային կենտրոնին 200000/երկու հարյուր/ հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2020թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17
գ.Թեղենիք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 06

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 36հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Սահմանել 2020թվականի ապրիլի 05-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ,,Սահմանադրական փոփոխության անցկացման նպատակով" տեղամասային կենտրոն, Թեղենիք համայնք 1-ին փողոց N 20 շենք հասցեում գտնվող ,,Թեղենիքի միջնակարգ դպրոց":

2.Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոն տիրապետող կազմակերպության ղեկավարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` /ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2020թ. փետրվարի 11
գ.Թեղենիք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 05

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հենրիկ Ռաֆայելի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատմանը և շինությանը/ծածկագիր 07-032-001-001/հասցեավորել և տալ հետևյալ հասցեն՝ գյուղ Թեղենիք 1-ին փողոց տուն 62:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** /**ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2020թ. փետրվարի 10
գ.Թեղենիք